



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2022 թ.

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՂԹԱԿԻՑ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Զեր 06.07.2022թ. հարցմանը

Հարգելի Լուսինե Սարգսյան

Զեր հարցադրումների պատասխանները ըստ հաջորդականության ներկայացնում եմ ստորև.

1. Լոռու մարզում 2022 թվականի մայիս-հունիս ժամանակահատվածում մարզի ո՞ր համայնքներն են տուժել կարկտահարությունից

Լոռի Բերդ, Օձուն, Փամբակ, Սպիտակ, Գյուլագարակ և Ախթալա համայնքների 23 բնակավայրեր:

2. Ընդհանուր առմամբ որքա՞ն է կազմում վնասի չափը, հատկապես ի՞նչն է տուժել (հացահատիկի և այլ մշակաբույսերի ցանքատարածություններ, բերքատու ծառեր, շինություններ, այլ կառույցներ)

Կարկտահարության հետևանքով վնասվել է շուրջ 2388 հա հացահատիկի, 555 հա կարտոֆիլի, 298 հա բանջարեղենի, 202 հա պտուղ-հատապտղի, 11 հա հատիկաընդեղենի և 10 հա կերային մշակաբույսերի ցանքատարածություններ և տնամերձեր: Վնասների դրամական չափերի վերաբերյալ հաշվարկները ըստ անհրաժեշտության կատարվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:

3. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել Լոռու մարզպետարանի կողմից՝ տուժած համայնքների վնասի չափերը գնահատելու, բնակիչներին փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման կարգով, տեղացած կարկուտի պատճառված վնասների վերաբերյալ <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման>> համայնքային հանձնաժողովների կողմից կազմվել

են համապատասխան ակտեր և ներկայացվել <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման>> մարզային հանձնաժողովին, որն էլ համապատասխան ընթացակարգով ներկայացվել է <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման>> հանրապետական հանձնաժողովի քննարկմանը՝ համապատասխան ընթացք տալու համար: Տեղեկացնում եմ նաև, որ Լոռու մարզպետը համապատասխան գրություններով դիմել է ՀՀ Էկոնոմիկայի և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարներին:

4. Լոռու մարզի տարածքում քանի՞ հակակարկտային կայան կա տեղադրված և որտե՞ղ են դրանք տեղադրված

Լոռու մարզի 33 բնակավայրերում տեղադրված են 79 հակակարկտային կայաններ:

5. Ե՞րբ և որքա՞ն ֆինանսավորմամբ են տեղադրվել վերոնշյալ հակակարկտային կայանները

Հակակարկտային կայանները տեղադրվել են 2011-2022թթ. ընթացքում: Մեկ հակակարկտային կայանի շուկայական միջին գինը տատանվում է 2-2,5 մլն դրամի սահմաններում:

6. Արդյո՞ք ներկայում դրանք շահագործվում են, թե՞ ոչ

Այո

7. Լոռու մարզում գործո՞ւմ է հակակարկտային ցանցերի արտադրամաս, եթե այո, ո՞ր համայնքում և ի՞նչ արտադրողականությամբ


Լոռու մարզի Դարպաս բնակավայրում գործում է հակակարկտային ցանցերի արտադրամաս, իսկ արտադրողականության ծավալների վերաբերյալ մարզպետարանը տեղեկատվության չի տիրապետում:

Հարգանքով՝

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ

12/07/2022

X



ԳՈՒ ԱՍՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ.ԱՍՐՅԱՆ